ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

20. 05. 2022Թ.Ք. ԻՋԵՎԱՆ

Նիստին ներկա էին խորհրդի 13 անդամներից 10-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաներից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների մասին: (Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան)
2. Ֆակուլտետի 2022-2026 ուստարիների ուսումնական պլանների հաստատում: (Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան)

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյան:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետի ուսանողները շատ պասիվ են եղել հարցման մասնակցության գործում: 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակում հետազոտական աշխատանք իրականացրած 36 ուսանողներից հարցմանը մասնակցել է 5 ուսանող /8,9%/: Նշվածին հակառակ բավականին ակտիվ մասնակցություն են ունեցել հետազոտական աշխատանք ղեկավարած դասախոսները /6/5/:

Զեկուցողը նշեց, որ Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինն առաջին կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո, մարտի սկզբին, ուսանողների կրթական կարիքների վերհանման շրջանակներում, հարցման միջոցով

ուսումնասիրել է հետազոտական աշխատանքների կազմակերպումից և գնահատումից ուսանողների բավարարվածությունը: Հարցման նպատակն է եղել բացահայտել հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում ուսանողների մոտ ի հայտ եկած խնդիրները, հավաքագրել առաջարկներ հետազոտական աշխատանքների կազմակերպման և իրականացման բարելավման ուղղությամբ, ակտիվացնել ուսանողների մասնակցությունը հետազոտական աշխատանքներին և խթանել ուսանող – բուհ համագործակցությունը:

Հարցաշարը ներառել է հարցեր, որոնց միջոցով նպատակ ենք ունեցել պարզելու ուսանողների բավարարվածությունը.

1. հետազոտական աշխատանքների բովանդակությունից և ռեսուրսներից,
2. հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում ղեկավարի աջակցությունից,
3. կատարած աշխատանքից,
4. հետազոտական աշխատանքի կազմակերպումից,
5. հետազոտական աշխատանքի գնահատումից:

Հարցման օբյեկտիվության և ուսանողների անկաշկանդ մասնակցության նկատառումներով հարցումն իրականացվել է անանուն և առցանց եղանակով:

Զեկուցողը ըստ հարցերի ներկայացրեց վերլուծության արդյունքները: Այսպես.

1. Բավարարվածությունը հետազոտական աշխատանքի բովանդակությունից և ռեսուրսներից

Այս բաժնում ուսումնասիրվել է ուսանողների մասնակցությունը հետազոտական աշխատանքների համար թեմաների ընտրության, կազմակերպման գործընթացին: Նախորդ ուսումնական տարվա համեմատ ուսանողների մասնակցությունը թեմաների առաջադրման գործընթացում աճել է, ինչը վկայում է հետազոտական աշխատանքների նկատմամբ հետաքրքրության բարձրացման և այդ գործընթացում նրանց ինտեգրման մասին: Ընդ որում, հարցմանը մասնակցած հետազոտական աշխատանքների ղեկավարները փաստել են, որ ուսանողներն ամբողջությամբ կամ մասամբ մասնակցել են թեմաների առաջադրմանը, դա փաստել է նաև ուսանողները: Թեմայի արդիական և հետաքրքիր լինելը խթանում և

մոտիվացնում է, ներգրավում է ուսանողին ստեղծագործական աշխատանքի մեջ, բարձրացնում է նրա ձգտումն ինքնուրույն աշխատելու և արդյունքի հասնելու հարցում: Հետևաբար, հետազոտական աշխատանքը պետք է հնարավորինս լինի ուսանողի նախասիրությունների և հնարավորությունների շրջանակներում:

«Մասնակցել եք արդյո՞ք հետազոտական աշխատանքի թեմաների առաջադրմանը՝ արտահայտելովձեր ցանկությունները» հարցին պատասխանել են 2 ուսանող՝ տալով դրական պատասխան: «Կատարել և ներկայացրե՞լ եք ձեր հետազոտական աշխատանքը» հարցին երկու ուսանող դրական է պատասխանել, իսկ 3 ուսանող՝ բացասական: Բացասական պատասխանների վրա կարիք կա ուշադրություն դարձնել, քանի որ հաջորդ՝ «Որքանո՞վ ձեզ հետաքրքրեց առաջադրված հետազոտական աշխատանքի թեման» հարցին երեք ուսանող պատասխան չի տվել, իսկ 1 ուսանող նշել է, որ այն իր նախասիրությունների շրջանակում է, իսկ 1 այլ ուսանողի համար այն ուղղակի հետաքրքիր թեմա է եղել: «Ըստ Ձեզ ձեր աշխատանքը պարունակու՞մ էր հետազոտություն կատարելու տարրեր» հարցին պատասխանած երկու ուսանողները նշել են, թեման ամբողջությամբ հետազոտական է եղել: Աշխատանքների ամբողջությամբ հետազոտական լինելու հետ կապված ուսանողները ճիշտ են գնահատել աշխատանքների պահանջները և նրանց կարծիքները համընկնում են աշխատանքների վերաբերյալ դասախոսների կարծիքների հետ: Այս հարցին պատասխանած դասախոսներից 3-ը նշել են, որ իրենց ղեկավարած աշխատանքը ամբողջությամբ հետազոտական էր, իսկ 2-ը գտնում են, որ այն ավելի շատ ինքնուրույն աշխատանք էր: Սա նշանակում է, որ ամբիոնները պետք է հետևողական լինեն թեմաների հաստատման ժամանակ, իսկ դասախոսներն անպայման իրենց աշխատանքերում կարևորեն հետազոտական բաղադրիչի, հետազոտական տարրերի առկայությունը:

Հետազոտական աշխատանքի առաջնահերթ նպատակն է ուսանողի մոտ ձևավորել և զարգացնել գործնական կարողությունները և մասնագիտական հմտությունները: Այստեղ նույնպես պետք է փաստել, որ հետազոտական աշխատանքի իրականացումը կատարել է իր առաջնահերթ խնդիրը: Նշենք, որ

ուսանողներն ընդհանուր առմամբ բավարարված են հետազոտական աշխատանքի իրականացումից, որովհետև այս հարցին պատասխանած ուսանողները նշել են, որ այն իրենց տվել է ինքնուրույն աշխատելու ունակություններ, նոր գիտելիքներ, վերլուծելու կարողություններ, գործնական կարողություններ, դատողություններ և եզրակացություններ կատարելու ունակություններ։

«Իրականացման տեսանկյունից ձեզ համար ինչ՞ չափով էր բարդ հանձնարարված հետազոտական աշխատանքը» հարցին պատասխանել է ընդամենը մեկ ուսանող՝ նշելով, որ հեշտությամբ է կատարել աշխատանքը։ Նույն հարցին պատասխանած ղեկավարներից երկուսը ևս այդպես է կարծում, իսկ երեքը գտնում է, որ ստիպված շատ նոր բաներ են սովորել։

Զեկուցողը նշեց, որ պետք է հետևողական լինել հետազոտական աշխատանքների թեմաների ընտրության, նրանց բարդության, ուսանողների կողմից դրանց իրականացման ընթացքի և որակի հարցում։ Պետք է ուսանողների հետ պարբերաբար կազմակերպել հանդիպում-քննարկումներ՝ ուղղորդելով նրանց ճիշտ աշխատելու և հետազոտելու գործում, նրանց մոտ բարձրացնել մոտիվացիան և հետազոտական աշխատանքի կարևորությունը։

2. Բավարարվածությունը հետազոտական աշխատանքի ղեկավարի աջակցությունից

Աշխատանքի իրականացման գործընթացում շատ կարևոր է ղեկավարի ճիշտ դիրքորոշումը և աջակցության ձևն ու չափը։ Նախ ուսանող-ղեկավար համագործակցության մեջ ուսանողը պետք է հստակ գիտակցի իր ինքնուրույն աշխատելու կարևորությունն ու պահանջը, և ճիշտ գնահատի այն իրավիճակները, որտեղ պետք է ակնկալի ղեկավարի աջակցությունը։ Իսկ ղեկավարները պետք է ուսանողներին սովորեցնեն ինչպես աշխատել ինքնուրույն և ինչպես հասնեն արդյունքների։

Հետազոտական աշխատանք կատարելու երկու տարիների փորձը և ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ մեր ուսանողները ղեկավարներից ավելի մեծ աջակցություն են ակնկալում, քան կարելի է։ Այդ պատճառով էլ բավարարված չեն ղեկավարների աջակցությունից։

«Գնահատեք դասախոսի աջակցությունը» հարցին պատասխանել է մեկ ուսանող, որը բավարարված չէ եղել հետազոտական մեթոդների ընտրության, վերլուծությունների կատարման, գրականության և մեթոդական նյութերի ընտրության և աշխատանքի արդյունքների ձևակերպման ժամանակ ղեկավարի աշխատանքից և գնահատել է 3.5 միավոր: Նույն հարցին պատասխանած ղեկավարները բոլորովին այլ կերպ են գնահատել իրենց աջակցությունը ուսանողներին: Նրանք 4,20 են գնահատել իրենց աջակցությունը հետազոտական մեթոդների ընտրության գործում, 3,80՝ վերլուծությունների կատարման ժամանակ, 4,00՝ գրականության և մեթոդական նյութերի ընտրության գործում և 3,80՝ աշխատանքի արդյունքների ձևակերպման ժամանակ:

Զեկուցողը նշեց, որ նմանատիպ խնդիրները կարող են պայմանավորված լինել հետազոտական աշխատանքներ ղեկավարող դասախոսների մեծ բեռնվածությամբ, ինչի մասին բարձրաձայնել են նաև դասախոսները: Նրանք նշել են, որ մեծ թվով ուսանողների հետ մեկ ղեկավարը արդյունվետ չի կարող աշխատել: Նաև այդ արդյունքները կարող են պայմանավորված լինել ղեկավարի գործառույթների վերաբերյալ ուսանողների ոչ ճիշտ պատկերացմամբ:

Այնուամենայնիվ, այստեղ երկկողմանի խնդիրներ կան, որոնք նաև բովանդակային են և անհրաժեշտ են նոր մոտեցումներ և նոր լուծումներ, մասնավորապես հետազոտական աշխատանքներ ղեկավարող դասախոսների բեռնվածության նորմերի վերանայման հետ կապված:

3. Ուսանողի բավարարվածությունն իր կատարած աշխատանքից

Զեկուցողը նշեց, որ ուսանողների կատարած աշխատանքից բավարարվածության արդյունքները նախորդ բաժնի արդյունքների նույն պատկերն են արտացոլում: Արդյունքները ցույց են տալիս, թե ուսանողները հետազոտական աշխատանքի իրականացման և արդյունքների ձևակերպման ո՞ր գործընթացում են դժվարացել, և որը հաղթահարել հեշտությամբ: Ե՛վ դասախոսները, և՛ ուսանողները վկայել են, որ ուսանողների մոտ հիմնականում չի ստացվել ինքնուրույն ձևակերպել աշխատանքի նպատակն ու խնդիրները, ինքնուրույն պլանավորել հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքը, գնահատել թեմայի արդիականությունը և

նշանակությունը։ Ղեկավարները բարձր են գնահատել ձեռք բերած արդյունքները և կատարած աշխատանքը ներկայացնելու ուսանողների կարողությունները։

Որքանո՞վ է Ձեզ մոտ ստացվել ինքնուրույն…» հարցը բաղկացած է եղել մի քանի ենթակետերից։ Պլանավորել հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքը երկու ուսանող հաջողված է համարում և տվել է 4 գնահատականը։ Նույն գնահատականն են տվել նաև ղեկավարները։ Աշխատանքի նպատակն ու խնդիրները ձևակերպելու կարողությունը ուսանողները գնահատել են 4, իսկ ղեկավարները՝ 3,80։ Թեմայի արդիականությունը և նշանակությունը գնահատելու կարողությունը ուսանողները գնահատել են 4, իսկ ղեկավարները՝ 4,20։ Ձեռք բերված արդյունքները ներկայացնելու կարողությունը ուսանողները գնահատել են 3, իսկ ղեկավարները՝ 4,60։ Եզրակացությունը ձևակերպելու կարողությունը ուսանողները գնահատել են 4, իսկ ղեկավարները՝ 3,80։ Կատարած աշխատանքը ներկայացնելու կարողությունը ուսանողներից մեկը գնահատել է 4, մեկը՝ 3 իսկ ղեկավարները՝ 4,60։ Անհրաժեշտ նյութերը հավաքագրելու կարողությունը ուսանողներից մեկը գնահատել է 4, մեկը՝ 3 իսկ ղեկավարները՝ 4։ Անհրաժեշտ գրականությունից օգտվելու կարողությունը ուսանողներից մեկը գնահատել է 5, մեկը՝ 3 իսկ ղեկավարները՝ 4,50։

4. Բավարարվածությունը հետազոտական աշխատանքի կազմակերպումից

Ձեկուցողը ավելացրեց, որ հարցման շրջանակներում ուսումնասիրվել են նաև աշխատանքների կազմակերպման ձևերը։

«Ի՞նչ ձևով էր կազմակերպված հետազոտական աշխատանքը» հարցին պատասխանած երկու ուսանողները նշել են, որ հետազոտական աշխատանքը անհատական բնույթ էր կրում և հաջորդ՝ «Աշխատանքի կազմակերպման ո՞ր ձևն եք նախընտրում հետազոտական աշխատանքը արդյունավետ կատարելու համար» հարցին նրանցից մեկը նշել է անհատական և խմբային աշխատանքների զուգակցումը, իսկ մեկը՝ խմբային աշխատանքը։ Հարցմանը մասնակցած դասախոսները նշել էին, որ ուսանողներին ծանոթացրել էին հետազոտություն կատարելու մեթոդաբանությանը։ Դա էին փաստել նաև հարցմանը մասնակցած ուսանողները։ Պետք է նշել, որ դասախոսներն առավելությունը տալիս են

անհատական աշխատանքի ձևին, գտնում են, որ այն ավելի արդյունավետ է և հիմնավորում են նրա առավելությունը։ Օրինակ, նրանք նշում են, որ.

- անհատական աշխատանքը հեշտ վերահսկելի է, հստակ ստուգվող և գնահատվող,
- ուսանողի ունակություններից կախված դասախոսն ավելի հեշտ է աշխատում և հանձնարարությունները լինում են ուղղորդված,
- անհատական աշխատանքներն ավելի լավ են բացահայտում ուսանողի ձեռբերումները, հնարավորություն են տալիս ուսանողին դրսևորվել, գործել ինքնուրույն, ներկայացնել իր հնարավորությունները,
- ավելի հեշտ է ստանալ հետազոտական պատկեր, և ավելի հեշտ է գահատել աշխատանքը,
- անհատական աշխատանքների դեպքում ուսանողը կարողանում է գիտակցել սեփական աշխատանքի գնահատականի օբյեկտիվությունը։

Իսկ ահա խմբային աշխատանքի դեպքում խմբի ոչ բոլոր ուսանողներն են նույն բեռնվածությամբ աշխատում, որի արդյունքում դժվարություններ են ստեղծվում աշխատանքի ներկայացման և գնահատման հետ կապված։

5. Բավարարվածությունը հետազոտական աշխատանքի գնահատումից

Հետազոտական աշխատանքների գնահատման գործընթացի առաջնային քայլը լիարժեք իրականացված է։ Ուսանողները տեղեկացված են եղել աշխատանքի գնահատման չափանիշներից։ «Որտեղի՞ց եք ծանոթացել հետազոտական աշխատանքի գնահատման չափանիշներին» հարցին մեկ ուսանող նշել է, որ գնահատման չափանիշները ներկայացրել է դասախոսը, իսկ մեկ ուսանող՝ իմացել է կուրսընկերներից։ «Որքանո՞վ են Ձեր կարծիքով ճիշտ ընտրված հետազոտական աշխատանքի գնահատման չափանիշները» հարցին ուսանողներից մեկը գտել է, որ ամբողջովին ճիշտ է ընտրված։ Նույն պատասխանն են տվել ղեկավարներից երեքը։ Հետազոտության ղեկավար երկու դասախոս և մեկ ուսանող գտնում է, որ գնահատման չափանիշները մասամբ է ճիշտ ընտրված։ «Բավարարվա՞ծ եք հետազոտական աշխատանքի համար ձեր ստացած գնահատականից» հարցին պատասխանել են, որ իրենք ավելի բարձր են ստացել, քան իրենք սպասում էին։

Այնուհետև, պատասխանելով առաջադրված բաց հարցերին, դասախոսները մի քանի խնդիրներ են նշել: Մասնավորապես՝ մասնագիտական գրականության պակասը: Նշվել է նաև, որ հետազոտական բառը սխալ է, քանի որ ուսանողներն այս մակարդակում կատարում են ավելի շուտ ուսումնասիրություն, քան հետազոտություն: Նաև, որ ուսանողների բեռնվածությունը՝ դասընթաց+ՀԲ+պրակտիկա, մասամբ ազդում է դասընթացի որակի վրա:

Այս ամենը ի նկատի ունենալով՝ արվել են առաջարկություններ: Ըստ այդմ՝ առաջարկում են հետազոտական աշխատանքը զատել դասընթացից և դարձնել անկախ՝ կուրսային աշխատանքի նման և նրա գնահատականը չներառել դասընթացի միավորների մեջ: Առաջարկվել է նաև հետազոտական բաղադրիչներ ունենան շատ ժամաքանակ ունեցող առարկաները և հետազոտական աշխատաքի կատարման համար հատկացնել հավելյալ ժամեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը, ՀՆՄ անդամ Դ. Չիբուխչյանը, ՀՆՄ անդամ Մ. Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ

Հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաներից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքներն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ հանդես եկավ Վ, Աղաբաբյանը: Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետում իրականացվող առկա ուսուցման կրթական ծրագրերի ուսումնական պլանների վերանայման համար ստեղծվել են աշխատանքային խմբեր, որոնք, չնայած բավականին պասիվ են եղել, բայց ի վերջո մշակել են 2022-26 ուստարվա վերանայված ուսումնական պլանները: Զեկուցողը ներկաների քննարկմանը ներկայացրեց 2022-26 ուստարվա «Դեկորատիվ-կիրառական արվեստ» և «Դիզայն» կրթական ծրագրերի ուսպլաններում կատարած փոփոխությունները:

2022-26 ուստարվա «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի ուսպլանի մասնագիտական կառուցամասում կատարվել են հետևյալ փոփոխությունները

Տարե-թիվ	Կրթ.մոդուլի անվանումը	Կրեդիտ	Դաս.	Գործ. /սեմ./	Ինքն.	Ընդ.	Գնահ.ձևը
2021-2025	Գծանկար.-2	5	6	54	90	150	Եզ. Գն.
2022-2026	Գծանկար.-2	6	6	69	105	180	Եզ. Գն.
2021-2025	Գունանկ.-2	4	6	54	60	120	Եզ. Գն.
2022-2026	Գունանկ.-2	5	6	69	75	150	Եզ. Գն.
2021-2025	«ՀԲ» Զարդ. կոմպ.	2	4	26	30	60	Առ.Եզ.Գն.
2022-2026	«ՀԲ» Զարդ. կոմպ.»	4	8	52	60	120	Եզ. Գն.
2021-2025	Գծանկար.-5	4	4	56	60	120	Եզ. Գն.
2022-2026	Գծանկար.-5	5	4	71	75	150	Եզ. Գն.
2021-2025	Գունանկ.-5	4		60	60	120	Առ.Եզ.Գն.
2022-2026	Գունանկ.-5	5	4	71	75	150	Առ.Եզ.Գն.

2021-2025	«ՀԲ» Փայտի գեղ.մշակ-2	5	2	58	90	150	Եզ. Գն.
2022-2026	«ՀԲ» Փայտի գեղ.մշակ-2	4	2	58	60	120	Առ.Եզ.Գն.
2021-2025	«ՀԲ» Գործ. գեղ.մշ.-1	5	4	56	90	150	Եզ. Գն.
2022-2026	«ՀԲ» Գործ. գեղ.մշ.-1	4	4	56	60	120	Եզ. Գն.
2021-2025	«ՀԲ»Հայ արվ.պատ.-2	2	26	4	30	60	Առ.Եզ.Գն.
2022-2026	«ՀԲ»Հայ արվ.պատ.-2	4	54	4	30	120	Առ.Եզ.Գն.
2021-2025	Մետ.գեղ. մշ-3	5	2	58	90	150	Առ.Եզ.Գն.
2022-2026	Մետ.գեղ. մշ-3	3	2	28	60	90	Առ.Եզ.Գն.

2022-26 ուստարվա «Դիզայն» կրթական ծրագրի ուսպլանի մասնագիտական կառուցամասում կատարվել է հետևյալ փոփոխությունները

Տարե-թիվ	Կրթ.մոդուլի անվանումը	Կրեդիտ	Դաս.	Գործ. /սեմ./	Ինքն.	Ընդ.	Գնահ.ձևը
2021-2025	«ՀԲ» Դիզայնի պատմ.	2	22	8	60	90	Առ.Ընթ.

2022-2026	«ՀԲ» Դիզայնի պատմ.	4	45	15	60	120	Եզ. Գն.
2021-2025	Մակ. և աշխ. նյ.վրա-1	4	8	52	60	120	Առ.Եզ.Գն.
2022-2026	Մակ. և աշխ. նյ.վրա-1	3	15	30	45	90	Առ.Եզ.Գն.
2021-2025	«ՀԲ»Դիզայնի նախագ.-1	5	8	52	90	150	Եզ. Գն.
2022-2026	Դիզայնի նախագ.-1	5	8	52	90	150	Եզ. Գն.
2021-2025	«ՀԲ»Դիզայնի նախագ.-2	8	8	82	150	240	Եզ. Գն.
2022-2026	«ՀԲ»Դիզայնի նախագ.-2	8	8	82	90	180	Եզ. Գն.
2021-2025	Ինտերիերի դիզայն	4	8	52	60	120	Առ.Ընթ.
2022-2026	Ինտերիերի դիզայն	4	8	82	90	180	Առ.Եզ.Գն.
2021-2025	«ՀԲ» Հագուս. մոդել. կոմ-1	3	4	26	60	90	Առ.Եզ.Գն.
2022-2026	Հագուս. մոդել. կոմ-1	3	4	26	60	90	Առ.Եզ.Գն.
2021-2025	«ՀԲ» Հագուս. մոդել. կոմ-2	5	4	56	90	150	Եզ. Գն.
2022-	«ՀԲ» Հագուս.	4	4	56	60	120	Եզ. Գն.

2026	մոդել. կոմ-2						
2021-2025	Հագուստի նախագ.-2	4	8	52	60	120	Առ.Եզ.Գն.
2022-2026	Հագուստի նախագ.-2	4	15	30	75	120	Առ.Եզ.Գն.
2021-2025	«ՀԲ» Տարազի պատմ.	3	20	10	60	90	Առ.Եզ.Գն.
2022-2026	«ՀԲ» Տարազի պատմ.	4	30	30	60	120	Առ.Եզ.Գն.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը, ՀԴՄ անդամ Դ. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Հաստատել «Դեկորատիվ-կիրառական արվեստ» և «Դիզայն» կրթական ծրագրերի 2022-26 ուսումնական պլանները:

2. «Դեկորատիվ-կիրառական արվեստ» և «Դիզայն» կրթական ծրագրերի ուսպլանում կատարված փոփոխությունները ներկայացնել ՈՒՄՎ:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ